



EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS

COUR EUROPEENNE DES DROITS DE L'HOMME

ԵՐՐՈՐԴ ԲԱԺԱՆՍՈՒՆՔ

ՇՈՒՈՒՈՎՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՍՈՒՐԴՈՎԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

(գանգատ թիվ 40358/05)

ՎՃԻՌ

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ

31 հուլիսի 2012թ.

ՎԵՐՋՆԱԿԱՆ

31/10/2012

*Սույն վճիռը վերջնական է դարձել Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետի
համաձայն: Այն կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների:*



Շուրիտվն ընդդեմ Հայաստանի եւ Մոլդովայի Հանրապետության գործով,

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Երրորդ բաժանմունք),
հանդես գալով Պալատի հետեւյալ կազմով՝

Ջուսեփ Կասադելլայ [Josep Casadevall]՝ *Նախագահ,*

Ալվինա Գյուլումյան [Alvina Gyulumyan],

Յան Շիկուտա [[Ján Šikuta],

Ինետա Ջիմեյլե [Ineta Ziemele],

Լուիս Լոպես Գեռա [Luis López Guerra],

Նոնա Ցոցորիա [Nona Tsotsoria],

Քրիստինա Պարդալոս [Kristina Pardalos]՝ *դատավորներ,*

եւ Սանտիագո Քեսադա [Santiago Quesada]՝ Բաժանմունքի քարտուղար,

2012 թվականի հունիսի 26-ին անցկացնելով դռնփակ խորհրդակցություն,

կայացրեց հետեւյալ վճիռը, որն ընդունվեց նույն օրը.

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

1. Սույն գործը հարուցվել է «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (Կոնվենցիա) 34-րդ հոդվածի համաձայն Մոլդովայի Հանրապետության քաղաքացի պրն Վալենտին Շուրիտվի (դիմումատու) կողմից ընդդեմ Հայաստանի Հանրապետության եւ Մոլդովայի Հանրապետության՝ 2005 թվականի հոկտեմբերի 16-ին Դատարան ներկայացված գանգատի (թիվ 40358/05) հիման վրա:

2. Դիմումատուին ներկայացրել է Քիշնեւում գործող իրավաբան պրն Ս. Կորչակը: Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացրել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի

Հանրապետության կառավարության լիազոր ներկայացուցիչ պրն Գ. Կոստանյանը: Մոլդովայի Հանրապետության կառավարությունը ներկայացրել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Մոլդովայի Հանրապետության լիազոր ներկայացուցիչ պրն Վ. Գրոսուն:

3. Դիմումատուն բողոքել է, *inter alia* (ի թիվս այլնի), որ իր օգտին կայացված՝ դատարանի 2003 թվականի մարտի 27-ի վերջնական վճիռը Հայաստանի դատարանների կողմից չճանաչելու եւ չկատարելու հետեւանքով խախտվել են Կոնվենցիայի 6-րդ հոդվածով եւ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով սահմանված իր իրավունքները:

4. 2008 թվականի դեկտեմբերի 11-ին գանգատն ուղարկվել է Հայաստանի Հանրապետության կառավարություն եւ Մոլդովայի Հանրապետության կառավարություն: Որոշվել է նաեւ միեւնույն ժամանակ ուսումնասիրել գանգատի ընդունելիության եւ ըստ էության քննության հարցերը (29-րդ հոդվածի 1-ին կետ): Մոլդովայի Հանրապետության անունից ընտրված դատավոր պրն Միհայ Պուալելունջիի հրաժարականից հետո (Դատարանի կանոնակարգի 6-րդ կանոն) Պալատի նախագահը *ad hoc* (ժամանակավոր) դատավոր է նշանակել պրն Յան Շիկուտային (Կոնվենցիայի 26-րդ հոդվածի 4-րդ կետ եւ Դատարանի կանոնակարգի 29-րդ կանոնի 1-ին կետ):

ՓԱՍՏԵՐԸ

I. ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

5. Դիմումատուն ծնվել է 1945 թվականին եւ բնակվում է Քիշնեւում:

Ա. Գործի նախապատմությունը

6. 1971 թվականի մայիսին դիմումատու, որն այդ ժամանակ բնակվում էր Երեւանում, «Երեւանի մսի կոմբինատ» պետական ձեռնարկությունում աշխատելիս իր աշխատավայրում ստացել է վնասվածք, մասնավորապես՝ ողնաշարի կոտրվածք: Նրան ճանաչել են մշտական խնամքի կարիք ունեցող՝ առաջին կարգի հաշմանդամ եւ տրամադրել հաշմանդամության ամսական նպաստ:

7. 1972 թվականի փետրվարի 25-ին մսի կոմբինատի վարչակազմն ընդունել է իր պատասխանատվությունը միջադեպի համար եւ դիմումատուին նշանակել հաշմանդամության նպաստի եւ միջին աշխատավարձի տարբերությունը համարժեք՝ ցմահ ամսական վճար:

Բ. Դիմումատուի նախաձեռնությամբ հարուցված առաջին եւ երկրորդ խումբ վարույթները

8. Չպարզված օրը դիմումատու, որը մինչ այդ, հայտնի է, որ տեղափոխվել էր Մոլդովայի ԽՍՀ, տեղական դատարաններում հայց է հարուցել մսի կոմբինատի դեմ՝ վնասների հատուցման պահանջով:

9. 1973 թվականի նոյեմբերի 20-ին Քիշնևի Լենինսկի շրջանային դատարանն արձակել է՝ մսի կոմբինատի կողմից խնամքի ծախսերի վճարման կարգադրություն, այն է՝ 1 375 ռուբլի միանվագ գումար եւ 62,50 ռուբլու չափով ամսական վճար՝ 1973 թվականի հոկտեմբերի 29-ից մինչեւ 1975 թվականի օգոստոսի 20-ն ընկած ժամանակահատվածի համար. վերջինն այն օրն է, երբ դիմումատուն պետք է անցներ իր հերթական բժշկատնային փորձաքննությունը: 1974 թվականի հունվարի 16-ին Մոլդովայի ԽՍՀ Գերագույն դատարանի քաղաքացիական պալատը փոփոխել է այդ վճիռը՝ նվազեցնելով տրամադրվող գումարները համապատասխանաբար մինչեւ 882 ռուբլի եւ 40 ռուբլի:

10. Պարզվում է, որ դիմումատուին չպարզված օրը տրվել է անժամկետ հաշմանդամության կարգավիճակ՝ աշխատունակության 100% կորստով: Այնուհետեւ պարզվում է, որ կոմբինատը 1975 թվականի օգոստոսից հետո

կամավոր հիմունքներով շարունակել է կատարել ամսական վճարումները:

11. 1980-ական թվականների վերջերին՝ չպարզված օրը, դիմումատուն հայց է հարուցել մսի կոմբինատի դեմ՝ լրացուցիչ բժշկական խնամքով եւ լրացուցիչ կերակրմամբ պայմանավորված ծախսերից բխող հավելյալ վնասների հատուցման պահանջով:

12. 1988 թվականի հունվարի 15-ին Երեւան [քաղաքի] Օրջոնիկիձեի շրջանի դատարանը բավարարել է դիմումատուի պահանջները եւ մսի կոմբինատին պարտավորեցրել է վճարել 5 430 ռուբլի միանվագ գումար՝ 1971-1986 թվականների ընթացքում ստացած լրացուցիչ բժշկական խնամքի հետ կապված ծախսերի դիմաց, 400 ռուբլի միանվագ գումար՝ 1986 թվականի նոյեմբերից մինչեւ 1987 թվականի հունիսն ընկած ժամանակահատվածի համար եւ 4 655 ռուբլի միանվագ գումար՝ 1971 թվականի հոկտեմբերից մինչեւ 1987 թվականի հունիսն ընկած ժամանակահատվածում լրացուցիչ կերակրմամբ պայմանավորված ծախսերի դիմաց (այսուհետ՝ 1988 թվականի վճիռ): Այնուհետեւ Շրջանային դատարանը մսի կոմբինատին պարտավորեցրել է դիմումատուին վճարել ամսական 119,63 ռուբլի՝ լրացուցիչ բժշկական խնամքի եւ հատուկ սննդակարգի հետ կապված կարիքների համար, որն ուժի մեջ պետք է մտնէր վճռի կայացման օրվանից:

13. Բողոք չի ներկայացվել, ուստի այդ վճիռը վերջնական է դարձել:

14. Պարզվում է, որ կոմբինատը 1992 թվականի հունվարի 1-ից սկսած դադարեցրել է դիմումատուին ամսական վճարումներ կատարելը:

15. 1995 թվականի հունիսի 14-ին «Երեւանի մսի կոմբինատը», որը մինչ այդ արդեն վերանվանվել էր «Ուրարտու» արտադրական միավորում, վերակազմավորվել է «Ուրարտու» արտադրական միավորում (Երեւանի մսի կոմբինատ) բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ «Ուրարտու» ԲԲԸ) եւ հետագայում սեփականաշնորհվել է: Ընկերության կանոնադրության համաձայն՝ «Ուրարտու» ԲԲԸ-ն եղել է «Ուրարտու» արտադրական միավորման իրավահաջորդը:

16. 1995 թվականի հուլիսի 26-ի գրությամբ «Ուրարտու» ԲԲԸ-ի գլխավոր տնօրեն Ռ.Դ.-ն Մոլդովայի հաշմանդամների միությանը տեղեկացրել է, որ

կոմբինատն ունի ֆինանսական խնդիրներ եւ ի վիճակի չէ կատարել վճարումները: Գլխավոր տնօրենը պարտավորվել է վերսկսել վճարումները՝ չնայած այդ խնդիրներին:

17. 1997 թվականի հունվարի 14-ին Երեւան [քաղաքի] Էրեբունի շրջանի ժողովրդական դատարանը, «Ձեռնարկությունների եւ անհատ ձեռներեցների սնանկացման մասին» օրենքի դրույթների համաձայն, սնանկ է ճանաչել «Ուրարտու» ԲԲԸ-ն: 1997 թվականի ապրիլի 28-ին ընկերությունն աճուրդի է հանվել եւ վաճառվել է մասնավոր անձի: Համապատասխանաբար 1997 թվականի մայիսի 12-ին եւ հունիսի 2-ին Շրջանային ժողովրդական դատարանը մասնավոր անձին հայտարարել է որպես «Ուրարտու» ԲԲԸ-ի նոր սեփականատեր, եւ սնանկության վարույթն ավարտել է՝ պարտապան ընկերությանն ազատելով որեւէ պարտք մարելուց: «Ուրարտու» ԲԲԸ-ն իր հերթին ընդունել է նոր կանոնադրություն, որի համաձայն՝ այն չի համարվել որեւէ այլ ընկերության իրավահաջորդ եւ պատասխանատվություն չի կրել որեւէ այլ ընկերության պարտքերի համար:

18. 2001 թվականի ապրիլի 13-ի գրությամբ Մոլդովայի արդարադատության նախարարությունը (ՄԱՆ) Հայաստանի արդարադատության նախարարությանը (ՀԱՆ) տեղեկացրել է դիմումատուի՝ 1988 թվականի վճիռը չկատարելու վերաբերյալ պնդումների մասին: Մեկնաբանելով այն փաստը, որ «Ուրարտու» ԲԲԸ-ն կանգնած է եղել ֆինանսական դժվարությունների առջեւ՝ ՄԱՆ-ն ուշադրություն է հրավիրել 1994 թվականի սեպտեմբերի 9-ին Մոսկվայում ստորագրված «Աշխատանքային պարտականությունները կատարելու հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության կամ առողջությունն այլ կերպ վնասած աշխատողներին պատճառված վնասի փոխհատուցման իրավունքները փոխադարձաբար ճանաչելու մասին» համաձայնագրի 7-րդ հոդվածի վրա (*Соглашение о взаимном признании прав на возмещение вреда, причиненного работникам увечьем, профессиональным заболеванием либо иным повреждением здоровья, связанные с исполнением ими трудовых обязанностей*)՝ Մոսկվայի համաձայնագիր) եւ դիմել է ՀԱՆ-ին՝ իր հարցման արդյունքների մասին իրեն տեղյակ

պահելու պահանջով:

19. 2001 թվականի հունիսի 25-ի գրությամբ ՀԱՆ-ը տեղեկացրել է ՄԱՆ-ին, որ պատշաճ կերպով լրացված բոլոր փաստաթղթերը դիմումատուի կողմից ներկայացվելու պայմանով այն պատրաստ է այդ փաստաթղթերն ուղարկել համապատասխան դատարան՝ տվյալ վճռի կատարման համար, ինչպես պահանջվում է Անկախ Պետությունների Համագործակցության (ԱՊՀ) համաձայնագրերով:

20. 2001 թվականի նոյեմբերի 19-ին դիմումատուն նամակով դիմել է ՄԱՆ՝ բողոքելով, *inter alia*, 1988 թվականի վճռի չկատարման կապակցությամբ, ինչպես նաև հայցելով, որ ապառքները վճարվեն, եւ ամսական վճարումները վերսկսվեն:

21. 2001 թվականի դեկտեմբերի 7-ի գրությամբ ՄԱՆ-ը դիմումատուի նամակը փոխանցել է ՀԱՆ-ին:

22. Չպարզված օրը դիմումատուն դիմել է ՀԱՆ-ին՝ տեղեկացնելով, որ վերջինիս պահանջը պատշաճ կերպով լրացված փաստաթղթերի վերաբերյալ, հավանաբար, թյուրիմացություն է, քանի որ իր բողոքները վերաբերել են Հայաստանի Հանրապետության համապատասխան դատարանների կողմից կայացված վճռի՝ որպես օտարերկրյա դատական ակտի չկատարմանը:

23. ՄԱՆ-ը 2002 թվականի օգոստոսի 2-ին նույնաբովանդակ գրություն է ուղարկել ՀԱՆ՝ գրությանը կցելով 1988 թվականի վճռի պատճենը եւ հայտնելով, որ անհրաժեշտ բոլոր կատարողական փաստաթղթերը գտնվում են Հայաստանի Հանրապետության իշխանությունների տնօրինման ներքո:

24. 2002 թվականի սեպտեմբերի 20-ի գրությամբ ՀԱՆ-ը տեղեկացրել է ՄԱՆ-ին, որ այն դիմել է Երեւան [քաղաքի] Էրեբունի եւ Նուբարաշեն համայնքների [ընդհանուր իրավասության առաջին աստիճանի] դատարան՝ 1988 թվականի վճիռը չկատարելու պատճառների մասին հարցմամբ:

25. 2002 թվականի նոյեմբերի 21-ի գրությամբ ՀԱՆ-ը տեղեկացրել է ՄԱՆ-ին, որ 1997 թվականի հունվարի 14-ին «Ուրարտու» ԲԲԸ-ն ճանաչվել է սնանկ, աճուրդով վաճառվել է երրորդ կողմին, որը չի համարվում որեւէ այլ

ընկերության իրավահաջորդ է և պատասխանատվություն չի կրում որեւէ այլ ընկերության պարտքերի համար:

26. Չպարզված օրը դիմումատուն դիմել է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին, ինչպես նաեւ ՀԱՆ՝ նշելով, որ վերը նշված պատասխանը հակասում է Մոսկվայի կոնվենցիայի 7-րդ հոդվածին, որը պետք է կիրառվեր իր գործում՝ «Ուրարտու» ԲԲԸ-ն լուծարվելու դեպքում:

27. Չպարզված օրը դիմումատուն դիմել է ՀԱՆ՝ պնդելով, որ «Ուրարտու» ԲԲԸ-ն չի կարող համարվել լուծարված, եւ որ Մոսկվայի կոնվենցիայի 7-րդ հոդվածն ամեն դեպքում պետք է կիրառվի: Նույն ժամանակահատվածում նա դիմել է ՄԱՆ՝ բողոքելով, որ վերջինս, Մոսկվայի կոնվենցիայի 10-րդ եւ 11-րդ հոդվածների համաձայն, չի արձագանքել Հայաստանի Հանրապետության իշխանությունների կողմից այդ կոնվենցիայի 7-րդ հոդվածի պահանջները չկատարելու փաստին:

28. Պարզվում է, որ դիմումատուն շարունակել է տարբեր պետական մարմիններում բողոքարկել 1988 թվականի վճռի չկատարումը: 2006 թվականի ապրիլի 3-ի գրությամբ Հայաստանի Հանրապետության աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունը, ի պատասխան դիմումատուի՝ Ռուսաստանի Դաշնության խորհրդարանին ուղղված բողոքի, տեղեկացրել է նրան, որ Կառավարության՝ 1992 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 576 որոշման համաձայն, որը 2004 թվականի օգոստոսի 26-ից այլեւս ուժի մեջ չէ, ընկերության լուծարման դեպքում վնասը պետք է հատուցի սոցիալական ապահովության մարմինը՝ պետական բյուջեի հաշվին: Դիմումատուն նման փոխհատուցում ստանալու համար կարող էր դիմել համապատասխան իրավասու մարմին, ինչը նա չի արել: Այդ պատճառով էլ դիմումատուի կողմից իր բողոքում բարձրացված հարցերը դուրս են մնացել վարչական մարմինների իրավասության սահմաններից: Դիմումատուին խորհուրդ է տրվել դիմել դատարան:

Գ. Դիմումատուի նախաձեռնությամբ հարուցված երրորդ խումբ վարույթները

29. Չպարզված օրը դիմումատուն մոլորվական դատարաններում հայց է

հարուցել «Ուրարտու» ԲԲԸ-ի դեմ՝ պնդելով, որ վերջինս 1992 թվականի հունվարի 1-ին դադարեցրել է վճարումներ կատարելը, եւ հայցելով փոխհատուցել կրած վնասների դիմաց լրացուցիչ ծախսերը՝ ա) դեղորայքի ծախսերը, բ) պրոթեզավորման եւ հինգ տարին մեկ անվասայլակ գնելու ծախսերը, գ) ներտնային ծառայությունների վճարները, դ) առողջարանային եւ հանգստի ծախսերը՝ ներառյալ եւ՝ իր, եւ՝ իրեն ուղեկցող անձի երաշխավորման ու ճանապարհային ծախսերը, ե) անկողնային սպիտակեղենի ծախսերը, գ) տրանսպորտային միջոցի գնման, դրա հիմնական վերանորոգման եւ վառելանյութի հետ կապված ծախսերը, ե) ֆիզիոթերապիայի, մերսման, սարքավորումների վարձակալության, ինչպես նաեւ բուժողի ու մերսողի վճարումները եւ ը) կացարանի ձեռք բերման եւ դրա պահպանման հետ կապված ծախսերը: «ա»-«է» կետերում ներկայացված ծախսերը պահանջվել են 1992 թվականի հունվարից մինչեւ 2001 թվականի դեկտեմբերն ընկած ժամանակահատվածի համար: Դիմումատուն հայտնել է, որ դիմել է «Ուրարտու» ԲԲԸ-ի ղեկավարությանը վերը նշված պահանջներով, սակայն մերժում է ստացել:

30. 2003 թվականի մարտի 27-ին Քիշնեւ քաղաքի Չոկանայի շրջանային դատարանը գտել է, որ «Ուրարտու» ԲԲԸ-ն «Երեւանի մսի կոմբինատ»-ի իրավահաջորդն է, եւ բավարարել է դիմումատուի՝ «ա»-«է» կետերում նշված պահանջները՝ նրան շնորհելով ընդհանուր 17 884 ԱՄՆ դոլար՝ միաժամանակ մերժելով նրա՝ «ը» կետում նախատեսված պահանջը (այսուհետ՝ 2003 թվականի վճիռ): Այդ վճիռը ենթակա է եղել բողոքարկման այն կայացնելուց հետո 15 օրվա ընթացքում:

31. Չպարզված օրը դիմումատուն վերաքննիչ բողոք է բերել՝ պահանջելով ամբողջությամբ բավարարել իր պահանջները:

32. 2003 թվականի հուլիսի 21-ին պրն Ռ.Դ.-ն նույնպես վերաքննիչ բողոք է ներկայացրել՝ ակնհայտորեն հանդես գալով որպես ընկերության գլխավոր տնօրեն:

33. 2003 թվականի հոկտեմբերի 22-ին Քիշնեւ [քաղաքի] վերաքննիչ

դատարանը՝ քաղաքացիական գործերով պալատի կազմով, որպես վերջնական դատական ատյան, անփոփոխ է թողել 2003 թվականի վճիռը:

34. Պարզվում է, որ դիմումատուն միեւնոյն ժամանակ հայցել է ՄԱՆ-ին աջակցել իրեն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում «Քաղաքացիական, ընտանեկան եւ քրեական գործերով իրավական օգնության եւ իրավական հարաբերությունների մասին» 1993 թվականի հունվարի 22-ի Մինսկի կոնվենցիային համապատասխան 2003 թվականի վճիռը ճանաչելու եւ կատարելու հարցում (*Конвенция о правовой помощи и правовых отношениях по гражданским, семейным и уголовным делам*՝ Մինսկի կոնվենցիա): Այնուհետեւ պարզվում է, որ 2003 թվականի սեպտեմբերի 1-ին ՄԱՆ-ը դիմումատուի պահանջը բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի հետ փոխանցել է ՀԱՆ-ին:

35. 2004 թվականի հունվարի 20-ի գրությամբ ՀԱՆ-ը դիմումատուին տեղեկացրել է, որ 2003 թվականի վճիռը ճանաչելու եւ կատարելու վերաբերյալ նրա դիմումը փոխանցվել է Հայաստանի Հանրապետության իրավասու դատարան:

36. 2004 թվականի մարտի 4-ին Երեւան [քաղաքի] Էրեբունի եւ Նուբարաշեն համայնքների [առաջին ատյանի] դատարանը բավարարել է դիմումատուի պահանջը՝ ճանաչելով 2003 թվականի վճիռը եւ պարտավորեցնելով կատարել այն:

37. Չպարզված օրը պրն Ռ.Դ.-ն վերաքննիչ բողոք է ներկայացրել այդ որոշման դեմ:

38. 2004 թվականի ապրիլի 23-ին Հայաստանի Հանրապետության քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանը որոշում է կայացրել դիմումատուի պահանջը մերժելու մասին: Այդ կապակցությամբ Վերաքննիչ դատարանը նշել է, որ 1988 թվականի վճռով դիմումատուին հատկացվել են ամսական վճարումներ բժշկական խնամքի եւ լրացուցիչ կերակրման համար, եւ այն վկայակոչել է Մինսկի կոնվենցիայի 55-րդ հոդվածի «գ» կետը:

39. Չպարզված օրը դիմումատուն վճռաբեկ բողոք է ներկայացրել, որով

պնդել է, որ 1988 թվականի եւ 2003 թվականի վճիռների քննության առարկան տարբեր է եղել, եւ որ պատասխանողն ամեն դեպքում 1992 թվականի հունվարի 1-ից դադարեցրել է վճարումներ կատարելը:

40. 2004 թվականի սեպտեմբերի 17-ին Վճռաբեկ դատարանը մերժել է դիմումատուի վճռաբեկ բողոքը չհիմնավորված լինելու պատճառով եւ անփոփոխ է թողել Քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի եզրահանգումները: 2005 թվականի ապրիլի 19-ից հետո՝ չպարզված օրը, դիմումատուն ստացել է այդ որոշման մեկ օրինակը:

41. 2007 թվականի նոյեմբերի 22-ին ՄԱՆ-ը գրություն է ուղարկել ՀԱՆ՝ փորձելով պարզել Հայաստանի Հանրապետության իշխանությունների պաշտոնական դիրքորոշումը դիմումատուի գործի շրջանակներում Մոսկվայի կոնվենցիայի մեկնաբանման եւ կիրառման, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության համապատասխան դատարանների կողմից 2003 թվականի վճռի կատարման հարցի օբյեկտիվ քննության հնարավորության վերաբերյալ: Պարզ չէ՝ այս գրությանը ՀԱՆ-ի կողմից որեւէ պատասխան տրվել է, թե ոչ:

II. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԵՆՄԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Հայաստանի Հանրապետության 1995 թվականի Սահմանադրություն (2005 թվականի նոյեմբերի 27-ին ներկայացված եւ 2005 թվականի դեկտեմբերի 6-ին ուժի մեջ մտած փոփոխություններով)

42. Ըստ 6-րդ հոդվածի՝ միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են կազմում:

Բ. Մոսկվայի կոնվենցիա (Մոլդովայի Հանրապետության եւ Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել համապատասխանաբար 1995 թվականի հոկտեմբերի 7-ին եւ 27-ին)

43. Մոսկվայի կոնվենցիայի համապատասխան դրույթների համաձայն.

Հոդված 1

«Սույն Կոնվենցիան տարածվում է Պայմանավորվող կողմերի (այդ թվում՝ նախկին ԽՍՀՄ) ձեռնարկությունների, հիմնարկների եւ կազմակերպությունների վրա՝ անկախ նրանց սեփականության ձեւից (այսուհետ՝ ձեռնարկություններ):

Աշխատողին աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության կամ առողջության այլ վնասման հետեւանքով պատճառված վնասի փոխհատուցման համար վճարները (այսուհետ՝ վնասի փոխհատուցում) կատարվում են ձեռնարկություններում նախկինում աշխատած աշխատողներին, իսկ նրանց մահվան դեպքում՝ վնասի փոխհատուցման իրավունք ունեցող, Պայմանավորվող կողմերից ցանկացածի քաղաքացի հանդիսացող եւ դրա տարածքում մշտապես բնակվող անձանց: ...»

Հոդված 2

«Աշխատողին աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության կամ առողջության այլ վնասման հետեւանքով պատճառված վնասի (այդ թվում այն դեպքերում, երբ աշխատունակության կորուստը՝ կապված աշխատողի կողմից աշխատանքային պարտականությունների կատարման կապակցությամբ աշխատավայրում տեղի ունեցած դժբախտ պատահարի հետ, առաջանում է տուժողի՝ մյուս Պայմանավորվող կողմի տարածք փոխադրվելուց հետո) կամ մահվան հետեւանքով պատճառված վնասի փոխհատուցումը կատարվում է այն Պայմանավորվող կողմի գործատուի կողմից, որի օրենսդրությունը խեղման, առողջության այլ վնաս ստանալու կամ մահվան պահին տարածվում է աշխատողի վրա:

Վնաս պատճառելու համար պատասխանատու գործատուն փոխհատուցում է տրամադրում իր ներպետական օրենսդրությանը համապատասխան»:

Հոդված 7

«Աշխատողին պատճառված վնասի համար պատասխանատու ձեռնարկության լուծարման եւ դրա իրավահաջորդի բացակայության դեպքում Պայմանավորվող կողմը, որի տարածքում լուծարվել է ձեռնարկությունը, այդ աշխատողների համար երաշխավորում է վնասի փոխհատուցում՝ ներպետական օրենսդրությանը համապատասխան»:

Հոդված 8

«Սույն Կոնվենցիայով նախատեսված գործերի վրա տարածվում է այն Պայմանավորվող կողմի դատարանի իրավագործությունը, որի տարածքում տեղի է ունեցել վնասի համար պատասխանատվության հանգեցրած գործողությունը, կամ այն Պայմանավորվող կողմի դատարանի իրավագործությունը, որի տարածքում բնակվում են վնասի փոխհատուցման իրավունք ունեցող անձինք»:

Հոդված 10

«Սույն Կոնվենցիայի մեկնաբանման կամ կիրառման վերաբերյալ վեճերը լուծվում են տվյալ Պայմանավորվող կողմերի միջեւ բանակցությունների միջոցով կամ այլ համընդհանուր ճանաչում ունեցող միջոցներով, այդ թվում՝ Պայմանավորվող կողմերից որեւէ մեկի պահանջով ստեղծվող հաշտեցման հանձնաժողովների միջոցով»:

Հոդված 11

«Սույն Կոնվենցիայով չկարգավորվող, այդ թվում՝ դրա կիրառման հետ կապված

հարցերը, քննվում են Պայմանավորվող կողմերի իրավասու մարմինների կողմից»:

Գ. Մինսկի կոնվենցիա (Հայաստանի Հանրապետության և Մոլդովայի Հանրապետության համար ուժի մեջ է մտել համապատասխանաբար 1994 թվականի դեկտեմբերի 21-ին և 1996 թվականի մարտի 26-ին)

44. Մինսկի կոնվենցիայի՝ «Որոշումները ճանաչելը և կատարելը» վերնագրով III բաժնի համապատասխան դրույթների համաձայն.

Հոդված 51. Որոշումները ճանաչելը և կատարելը

«Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը, սույն Կոնվենցիայի պահանջներին համապատասխան, ճանաչում և կատարում է մյուս Պայմանավորվող կողմերի տարածքում կայացված հետևյալ որոշումները՝ ա) քաղաքացիական և ընտանեկան գործերով արդարադատության մարմինների որոշումները...»:

Հոդված 53. Որոշման կատարման թույլտվություն ստանալու պահանջով դիմումը

«1. Որոշման կատարման թույլտվություն ստանալու պահանջով դիմումը ներկայացվում է այն Պայմանավորվող կողմի իրավասու դատարան, որտեղ որոշումը ենթակա է կատարման: Պահանջով դիմումը կարող է ներկայացվել նաև այն դատարան, որը գործով որոշում է կայացրել առաջին աստիճանով: Այդ դատարանը պահանջով դիմումն ուղարկում է տվյալ պահանջով դիմումի վերաբերյալ որոշում կայացնելու իրավասություն ունեցող դատարան...»:

Հոդված 54. Որոշումները ճանաչելու և կատարելու կարգը

«1. 51-րդ հոդվածով նախատեսված որոշումների ճանաչման և կատարման պահանջով դիմումները քննվում են այն Պայմանավորվող կողմի դատարանների կողմից, որի տարածքում պետք է իրականացվի որոշման կատարումը:

2. Որոշումները ճանաչելու և դրանց կատարման համար թույլտվություն ստանալու պահանջով դիմումները քննող դատարանը սահմանափակվում է սույն

Կոնվենցիայով նախատեսված պահանջները պահպանած լինելու հանգամանքը պարզելով: Այդ պահանջները պահպանված լինելու դեպքում դատարանը որոշում է կայացնում որոշումը կատարելու մասին...»:

Հոդված 55. Որոշումների ճանաչումը եւ կատարումը մերժելը

«...որոշումների ճանաչումը եւ դրանց կատարման համար թույլտվության տրամադրումը կարող է մերժվել, եթե. ... գ) այն Պայմանավորվող կողմի տարածքում, որտեղ որոշումը պետք է ճանաչվի եւ կատարվի, տվյալ գործով առկա է միեւնույն կողմերի միջեւ, միեւնույն առարկայի շուրջ եւ միեւնույն հիմքերով ավելի վաղ կայացված վերջնական որոշում...»:

Դ. «Ձեռնարկությունների եւ անհատ ձեռներեցների սնանկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ուժի մեջ է եղել 1995 թվականի հունիսի 18-ից մինչեւ 1997 թվականի մարտի 1-ը)

45. Համաձայն 17-րդ հոդվածի՝ դատարանն իրավասու է եղել պարտապանին սնանկ ճանաչել:

46. Ըստ 30-րդ հոդվածի 1-ին կետի՝ նախատեսվում էր, որ դատարանը որոշում է կայացնում սնանկ ճանաչված իրավաբանական անձ հանդիսացող պարտապանի վաճառքն իրականացնել աճուրդի միջոցով: Միեւնույն հոդվածի 4-րդ ենթակետի համաձայն՝ սնանկ ճանաչված իրավաբանական անձի պարտավորությունների համար գնորդը պատասխանատվություն չի կրում:

47. 34-րդ հոդվածով նախատեսվում էր, որ սնանկացման վերաբերյալ գործի դատական քննությունն ավարտելու պահից դատարանը պարտապանին ազատված է հայտարարում չվճարված բոլոր պարտքերի վճարումից, որից հետո արգելվում է պարտապանի նկատմամբ դատական կարգով կատարվող ցանկացած հետապնդում՝ այդ պարտքերի հատուցման նպատակով:

Ե. Հայաստանի Հանրապետության կառավարության 1992 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 576 որոշում

48. Որոշման 16-րդ կետի համաձայն, որն ուժը կորցրած է ճանաչվել 2004 թվականի օգոստոսի 26-ին, ընկերության լուծարման կամ վերակառուցման հետեւանքով վերջինիս գործունեության դադարեցման դեպքում աշխատողին աշխատանքային պարտականությունների կատարման կապակցությամբ պատճառված վնասը փոխհատուցում է նրա իրավահաջորդը, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ սոցիալական ապահովության մարմինը՝ պետական բյուջեի հաշվին:

ԻՐԱՎՈՒՆՔԸ

I. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ ԵՎ ԹԻՎ 1 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ 1-ԻՆ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ

49. Դիմումատուն բողոքել է, որ Հայաստանի Հանրապետության եւ Մոլդովայի Հանրապետության իշխանությունների կողմից չի կատարվել 1988 թվականի վճիռը, իսկ Հայաստանի Հանրապետության իշխանությունների կողմից՝ նաեւ 2003 թվականի վճիռը, որոնք երկուսն էլ կայացվել են դիմումատուի օգտին: Նա վկայակոչել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը եւ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը, որոնք այնքանով, որքանով վերաբերելի են, սահմանում են.

Հոդված 6

«Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են իր քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները ... ունի ... տրիբունալի կողմից ... արդարացի ... լսումների իրավունք»:

Թիվ 1 արձանագրության 1-ին հոդված

«Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել նրա գույքից, բացառությամբ ի շահ հանրության

եւ այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով:

Նախորդ դրույթները, այնուամենայնիվ, չեն խոչընդոտում պետության՝ այնպիսի օրենքներ կիրառելու իրավունքը, որոնք նա անհրաժեշտ է համարում ընդհանուր շահերին համապատասխան, սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կամ հարկերի կամ մյուս գանձումների կամ տուգանքների վճարումն ապահովելու համար»:

Ա. Ընդունելիությունը

1. 1988 թվականի հունվարի 15-ի վճիռը չկատարելը

ա) Բողոքի շրջանակները

50. 1988 թվականի վճռով դիմումատուին շնորհվել է երեք միանվագ վճարման ենթակա գումար, ինչպես նաեւ ամսական վճարումներ լրացուցիչ բժշկական խնամքի եւ լրացուցիչ կերակրման համար: Այնուամենայնիվ, դիմումատուի կողմից իր բողոքում եւ հետագա փաստարկներում բարձրացված միակ խնդիրը 1992 թվականի հունվարի 1-ից լրացուցիչ բժշկական խնամքի եւ լրացուցիչ կերակրման համար նախատեսված ամսական վճարումները չկատարելն է: Հետեւաբար Դատարանն այդ բողոքը կքննի միայն ամսական վճարումները չկատարելու մասով:

բ) Հայաստանի Հանրապետության մասով ներկայացված բողոքը

51. Հայաստանի Հանրապետության կառավարությունը պնդել է, որ դիմումատուն չի սպառել իրավական պաշտպանության ներպետական միջոցները տվյալ բողոքի մասով, քանի որ նա չի նախաձեռնել վարույթ Հայաստանի Հանրապետության կամ Մոլդովայի Հանրապետության համապատասխան դատարաններում՝ կապված 1988 թվականի վճռի չկատարման հետ:

52. Այս կապակցությամբ դիմումատուն որեւէ փաստարկ չի ներկայացրել:

53. Դատարանը գտնում է, որ առկա չէ [իրավական պաշտպանության ներպետական միջոցները] չսպառելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առարկությունները քննելու անհրաժեշտություն, քանի որ տվյալ բողոքն, ամեն դեպքում, անընդունելի է հետևյալ պատճառներով.

54. Սույն գործում 1988 թվականի հունվարի 15-ի վերջնական դատական ակտով դիմումատուին շնորհվել են նրա նախկին գործատուի՝ «Երեւանի մսի կոմբինատ»-ի կողմից տրամադրվելիք ամսական վճարվող գումարներ՝ կապված աշխատանքային պարտականությունների կատարման կապակցությամբ ստացված վնասվածքի հետ: Այնուամենայնիվ, 1997 թվականի հունիսի 2-ին՝ սնանկության վարույթի ավարտից եւ «Երեւանի մսի կոմբինատ»-ի իրավահաջորդ հանդիսացող «Ուրարտու» ԲԲԸ-ի վաճառքից հետո, ընկերությունն ազատվել է իր պարտքերը մարելու պարտավորությունից, որոնցում ներառված են եղել նաեւ դիմումատուի նկատմամբ ստանձնած պարտավորությունները (տե՛ս վերելում՝ 17-րդ պարբերությունը): Կարելի է, հետեւաբար, եզրակացնել, որ 1997 թվականի հունիսի 2-ից Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն այլեւս չի նախատեսվել՝ 1988 թվականի վճռով դիմումատուին ամսական վճարումներ կատարելու պարտավորություն:

55. Այս կապակցությամբ Դատարանը վերահաստատում է, որ միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչում ունեցող նորմերի համաձայն՝ յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի համար Կոնվենցիան տարածվում է այն փաստերի վրա, որոնք առաջացել են տվյալ Կողմի համար Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո (տե՛ս, օրինակ, *Յովանովիչն ընդդեմ Խորվաթիայի (որոշում)* [*Jovanovic v. Croatia* (dec.)], թիվ 59109/00, ՄԻԵԴ 2002-III):

56. Դատարանի դիտարկմամբ Կոնվենցիան եւ Թիվ 1 արձանագրությունը Հայաստանի Հանրապետության նկատմամբ ուժի մեջ են մտել 2002 թվականի ապրիլի 26-ից: Համապատասխանաբար այն ժամանակ, երբ Կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել, ո՛չ «Ուրարտու» ԲԲԸ-ն եւ ո՛չ էլ Հայաստանի Հանրապետության իշխանությունները ներպետական օրենսդրության համաձայն պարտավորված չեն եղել 1988 թվականի վճռի ուժով

դիմումատուին փոխհատուցման վճարումներ կատարել: Այսպիսով, Դատարանն իրավասու չէ քննել տվյալ բողոքը, քանի որ այն վերաբերում է դիմումատուի կողմից քննարկվող վճարումներն ստանալու իրավունքին, եւ հետեւաբար առնչվում է այն իրադարձություններին, որոնք տեղի էին ունեցել նախքան Հայաստանի Հանրապետության նկատմամբ Կոնվենցիան ուժի մեջ մտնելը:

57. Բացի դրանից, պարզելու համար, թե արդյոք 1988 թվականի վճռի չկատարման համար Հայաստանի Հանրապետության իշխանությունները պատասխանատու են եղել Մոսկվայի համաձայնագրի 7-րդ հոդվածի եւ Կառավարության թիվ 576 որոշման 16-րդ կետի հիմքով, անհրաժեշտ է հաստատել, թե արդյոք «Ուրարտու» ԲԲԸ-ին սնանկ ճանաչելը եւ այն այլ անձի վաճառելը հանգեցրել են դրա փաստացի լուծարմանը: Այնուամենայնիվ, Դատարանը չի կարող քննության առնել քննարկվող սնանկության վարույթի հարցը, քանի որ այն դադարեցվել է 1997 թվականին եւ, հետեւաբար, դուրս է Դատարանի *ratione temporis* (Ժամանակային իրավագործության առումով) իրավասությունից:

58. Դրանից հետեւում է՝ այս բողոքը *ratione temporis* հիմքով չի համապատասխանում Կոնվենցիայի դրույթներին՝ 35-րդ հոդվածի 3-րդ կետի իմաստով, եւ 35-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ պետք է մերժվի:

զ) Մոլդովայի Հանրապետության մասով ներկայացված բողոքը

59. Մոլդովայի Հանրապետության կառավարությունը պնդել է, որ Մոլդովայի Հանրապետության մասով այս բողոքը չի համապատասխանում *ratione loci* (տարածքային իրավագործության) եւ *ratione personae* (իրավախախտման սուբյեկտի գործոնի) սկզբունքներին: Այս կապակցությամբ նրանք պնդել են, որ աշխատավայրում դիմումատուի հետ տեղի ունեցած պատահարը գրանցվել է Հայաստանի Հանրապետության տարածքում, «Երեւանի մսի կոմբինատ»-ի դեմ վճիռ կայացրել է Հայաստանի Հանրապետության համապատասխան դատարանը, եւ հետեւաբար այն ենթակա է կատարման Հայաստանի Հանրապետության իշխանությունների կողմից՝ Հայաստանի Հանրապետության տարածքում:

60. Դիմումատուն պնդել է, որ Մոլդովայի Հանրապետության կառավարությունը որեւէ արդյունավետ քայլ չի ձեռնարկել 1988 թվականի վճիռը կատարելու համար՝ չնայած վերջինս տեղյակ է եղել այն մասին, որ 1992 թվականի հունվարից սկսած պարտապան «Ուրարտու» ԲԲԸ-ն դադարեցրել է իրեն վճարումներ կատարելը:

61. Դատարանը նշում է, որ սույն գործը վերաբերում է Հայաստանում հիմնադրված իրավաբանական անձի դեմ Հայաստանի Հանրապետության համապատասխան դատարանի կողմից կայացված վճիռը չկատարելուն (համեմատության համար տե՛ս *Ռաքուն ընդդեմ Մոլդովայի (որոշում)* [*Racu v. Moldova* (dec.)], թիվ 13136/07, 2008 թվականի հուլիսի 1): Այն փաստը, որ դիմումատուն, լինելով 1988 թվականի վճռի շահառու, միաժամանակ Մոլդովայի Հանրապետության քաղաքացի է, բավարար չէ պնդելու համար, որ Մոլդովայի Հանրապետության իշխանությունները որեւէ կերպ պատասխանատու են վճռի չկատարման համար: Այս առումով հարկ է նշել, որ դիմումատուն չի մանրամասնել, թե ինչ եղանակով եւ որ իրավական հիմքով են Մոլդովայի Հանրապետության իշխանությունները պարտավորված եղել ձեռնարկելու քայլեր, որոնք, սակայն, ենթադրաբար չեն ձեռնարկվել: Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Դատարանը գտնում է, որ Մոլդովայի Հանրապետության իշխանությունները

պատասխանատու չեն 1988 թվականի վճռի չկատարման համար:

62. Դրանից հետևում է, որ բողոքի այս մասը *ratione personae* հիմքով անհամատեղելի է Կոնվենցիայի դրույթների հետ՝ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի իմաստով, եւ պետք է մերժվի՝ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն:

2. 2003 թվականի մարտի 27-ի վճիռը չկատարելը

63. Դատարանը նշում է, որ այս բողոքը Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի իմաստով ակնհայտ անհիմն չէ: Դատարանն այնուհետեւ նշում է, որ այն անընդունելի չէ որեւէ այլ հիմքով: Այն, հետեւաբար, պետք է հայտարարվի ընդունելի:

Բ. Ըստ էության քննությունը

1. Կողմերի փաստարկները

64. Հայաստանի Հանրապետության կառավարությունը պնդել է, որ 2003 թվականի վճիռը ճանաչելու եւ կատարելու վերաբերյալ դիմումատուի պահանջի մերժմամբ չեն խախտվել դիմումատուի՝ Կոնվենցիայով նախատեսված իրավունքները: Մասնավորապես, այն պնդել է, որ 2003 թվականի վճռի առարկան 1988 թվականի վճռի առարկայի հետ եղել է նույնական, հետեւաբար, նման մերժումը եղել է նաեւ օրինական՝ Մինսկի կոնվենցիայի 55-րդ հոդվածի «գ» կետի եւ այլ ներպետական իրավական ակտերի նորմերի հիմքով: Այս առումով, Հայաստանի Հանրապետության կառավարությունը պնդել է, որ Մինսկի կոնվենցիայի վերոնշյալ դրույթը *res judicata* (իրավական որոշակիություն) սկզբունքի դրսևորում է, որի պայմանները տարածվել են սույն գործի վրա, քանի որ նախքան 2003 թվականի վճիռը կայացնելը միեւնույն կողմերի միջեւ, միեւնույն առարկայի շուրջ եւ միեւնույն հիմքերով կայացված է եղել մեկ այլ վերջնական վճիռ:

65. Դիմումատուն պնդել է, որ 1988 թվականի եւ 2003 թվականի վճիռների առարկաները եղել են տարբեր: Մասնավորապես, 1988 թվականի վճռով նրան տրամադրվել է ամսական վճար միայն բժշկական խնամքի եւ լրացուցիչ կերակրման համար, մինչդեռ 2003 թվականի վճռով «Ուրարտու» ԲԲԸ-ից հոգուտ դիմումատուի ենթակա է եղել բռնագանձման 17 884 ԱՄՆ դոլար՝ դեղորայքի, պրոթեզավորման, ներտնային ծառայությունների, առողջարանային բուժման, անկողնային սպիտակեղենի, տրանսպորտային միջոցի, վերջինիս հիմնական վերանորոգման եւ վառելանյութի, ինչպես նաեւ մերսման ծառայությունների ծախսերի համար:

2. Դատարանի գնահատականը

ա) Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետ

66. Դատարանը վերահաստատում է, որ [ներպետական] դատարանի կայացրած վճռի կատարումը 6-րդ հոդվածի իմաստով «դատաքննության» բաղկացուցիչ մասն է կազմում (տե՛ս *Հորնսբին ընդդեմ Հունաստանի* [*Hornsby v. Greece*], 1997 թվականի մարտի 19, § 40, Վճիռների եւ որոշումների մասին գեկույցներ 1997-II): Բացի դրանից, երբ բախտորոշվում են քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, 6-րդ հոդվածը կիրառելի է եւ՝ ներպետական, եւ՝ օտարերկրյա՝ ուժի մեջ մտած վճիռների կատարման նկատմամբ (տե՛ս *Մաքդոնալդն ընդդեմ Ֆրանսիայի (որոշում)* [*McDonald v. France* (dec.)], թիվ 18648/04, 2008 թվականի ապրիլի 29):

67. Դատարանն այնուհետեւ վերահաստատում է, որ դատարանների եւ տրիբունալների կողմից կայացված վճիռներում պետք է պատշաճորեն նշվեն դրանց հիմքում դրված պատճառաբանությունները: 6-րդ հոդվածի 1-ին կետի ուժով դատարանները պարտավորվում են իրենց վճիռները պատճառաբանել, սակայն դա չի կարող մեկնաբանվել այնպես, որ դատարաններից պահանջվում է մանրամասն անդրադառնալ յուրաքանչյուր փաստարկի (տե՛ս *Հիրվիսարին ընդդեմ Ֆինլանդիայի* [*Hirvisaari v. Finland*], թիվ 49684/99, § 30, 2001 թվականի

սեպտեմբերի 27): Պատճառաբանություն ներկայացնելու պարտավորության սահմանները կարող են տարբեր լինել՝ պայմանավորված որոշման բնույթով, եւ դրանք պետք է որոշվեն գործի հանգամանքների լույսի ներքո (տե՛ս *Ռուիս Տորիխան ընդդեմ Բսպանիայի* [Ruiz Torija y. Spain] եւ *Հիրո Բալանին ընդդեմ Բսպանիայի* [Hiro Balani v. Spain], 1994 թվականի դեկտեմբերի 9, շարք Ա, թիվ 303-Ա եւ 303-Բ, համապատասխանաբար § 29 եւ § 27, եւ *Ֆոմին ընդդեմ Մոլդովայի* [Fomin y. Moldova], թիվ 36755/06, § 24, 2011 թվականի հոկտեմբերի 11):

68. Անդրադառնալով սույն գործի հանգամանքներին՝ Դատարանը նշում է, որ 2003 թվականի մարտի 27-ի վերջնական որոշման համաձայն, Չոկանայի շրջանային դատարանը բավարարել է «Ուրարտու» ԲԲԸ-ի դեմ դիմումատուի ներկայացրած պահանջը՝ նրան շնորհելով ընդհանուր 17 884 ԱՄՆ դոլար: Ըստ Մինսկի կոնվենցիայի դրույթների՝ 2003 թվականի վճիռը [վճիռների] կատարման պահանջով դիմումի համաձայն ենթակա է եղել ճանաչման եւ կատարման Հայաստանի Հանրապետության իշխանությունների կողմից: Դիմումատուն նման պահանջով 2003 թվականի սեպտեմբերի 1-ին դիմել է ՀԱՆ-ին՝ ՄԱՆ-ի միջոցով (տե՛ս վերելում՝ 34-րդ պարբերությունը): 2004 թվականի մարտի 4-ին Երևան [քաղաքի] Էրեբունի եւ Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանը բավարարել է այդ պահանջը: Այնուամենայնիվ, 2004 թվականի ապրիլի 23-ին Քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանը վերանայել է դիմումատուի պահանջը եւ մերժել այն: Նման քայլով Վերաքննիչ դատարանը վկայակոչել է 1988 թվականի վճիռը եւ մեջբերել է Մինսկի կոնվենցիայի 55-րդ հոդվածի «գ» կետը՝ այդպիսով համարելով, որ միեւնույն կողմերի միջեւ, միեւնույն հիմքերով եւ միեւնույն առարկայի շուրջ նախկինում կայացված է եղել վերջնական վճիռ, այն է՝ 1988 թվականի վճիռը (տե՛ս վերելում՝ 38-րդ պարբերությունը):

69. Այս առումով, Դատարանը նշում է, որ չնայած այն սկզբունքը, որի հիման վրա մերժվել է դիմումատուի պահանջը, ինքնին անհիմն չի եղել, այնուամենայնիվ, Դատարանը ցանկանում է ուշադրություն հրավիրել Քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի կողմից այդպես գործելու

եղանակի վրա: Մասնավորապես, Քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 2004 թվականի ապրիլի 23-ի որոշման մեջ ֆորմալ առումով մեջբերվել է Կոնվենցիայի 55-րդ հոդվածը, մինչդեռ չի նշվել որեւէ պատճառաբանություն այն մասին, թե ինչից ելնելով են 1988 թվականի եւ 2003 թվականի վճիռների առարկաները համարվել նույնը: Դատարանը նշում է, որ 2003 թվականի վճռով դիմումատուին տրամադրվել է գումար՝ *inter alia*, ներտնային ծառայությունների, անկողնային սպիտակեղենի, տրանսպորտային միջոց գնելու, վերջինիս հիմնական վերանորոգման եւ վառելանյութի ծախսերի համար: Հետեւաբար Քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանն է պարտավորված եղել պատճառաբանելու, թե ինչու են այդ ծախսերը դասվում՝ դիմումատուին 1988 թվականի վճռով տրամադրված լրացուցիչ բժշկական խնամքի եւ լրացուցիչ կերակրման կատեգորիայի շարքին: Ուստի նման առանձին հանգամանքների պարագայում դատարանի պատճառաբանությունը չի կարող պատշաճ համարվել:

70. Վճռաբեկ դատարանը նույնպես փորձ չի արել շտկելու իրավիճակը, քանի որ այն պարզապես անփոփոխ է թողել Վերաքննիչ դատարանի որոշումը՝ նշելով, որ դիմումատուի բողոքը, որով վերջինս պնդել է, որ երկու վճիռների առարկաները տարբեր են, հիմնավորված չէ:

71. Ելնելով վերոշարադրյալից՝ Դատարանը եզրակացնում է, որ այն եղանակը, որով Քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանը մերժել է դիմումատուի՝ 2003 թվականի վճիռը ճանաչելու եւ կատարելու պահանջը՝ մասնավորապես ֆորմալ կերպով վկայակոչելով Մինսկի կոնվենցիայի 55-րդ հոդվածի «գ» կետը եւ պատճառաբանություն չներկայացնելով այն մասին, թե ինչու է այն 1988 թվականի եւ 2003 թվականի վճիռների առարկան համարում նույնը, չի համապատասխանում արդար դատաքննության պահանջներին:

72. Համապատասխանաբար, խախտվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը:

բ) Թիվ 1 արձանագրության 1-ին հոդված

73. Դատարանը, ելնելով Կոնվենցիայի 6-րդ հոդվածի ներքո կատարած իր վերոնշյալ եզրահանգումներից, անհրաժեշտ չի համարում միեւնույն բողոքը քննել առանձին՝ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի շրջանակներում:

II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՄՅՈՒՍ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ

74. Դիմումատուն Կոնվենցիայի 6-րդ հոդվածի եւ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի ներքո բողոքել է նաեւ այն հանգամանքի առնչությամբ, որ 1973 թվականի նոյեմբերի 20-ի վճիռը չի կատարվել, եւ որ Մոլդովայի Հանրապետության իշխանությունները պատասխանատու են եղել 2003 թվականի վճիռը չկատարելու համար: Այնուհետեւ դիմումատուն Կոնվենցիայի 2-րդ հոդվածի ներքո բողոքել է այն հանգամանքի առնչությամբ, որ նա զրկված է եղել կյանքի իրավունքից՝ բնականոն կյանքի իմաստով, եւ որ 14-րդ հոդվածի ներքո իր նկատմամբ ցուցաբերվել է խտրական վերաբերմունք, քանի որ իր օգտին կայացրած վճռի չկատարման պատճառը եղել է իր՝ ծագումով ռուս լինելը:

75. Հաշվի առնելով իր տրամադրության տակ գտնվող բոլոր նյութերը եւ այնքանով, որքանով բողոքի առարկա հարցերն իր իրավասության շրջանակներում են՝ Դատարանը գտնում է, որ դրանցով չի բացահայտվում Կոնվենցիայով կամ դրան կից արձանագրություններով սահմանված իրավունքների եւ ազատությունների խախտման որեւէ հատկանիշ:

III. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 41-ԸՆԴՈՒՄԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

76. Կոնվենցիայի 41-րդ հոդվածի համաձայն.

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել»:

Ա. Վնասը

77. Դիմումատուն պահանջել է 431 590 եվրո՝ որպես նյութական վնասի հատուցում եւ 1 000 000 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում:

78. Հայաստանի Հանրապետության կառավարությունը պնդել է, որ դիմումատուի թե՛ նյութական, թե՛ ոչ նյութական վնասների հատուցման վերաբերյալ պահանջները հիմնավորված չեն եւ պետք է մերժվեն: Ավելին, ինչ վերաբերում է ոչ նյութական վնասին, ապա դիմումատուն չի հիմնավորել, որ ենթադրյալ խախտման եւ պահանջվող վնասի հատուցման միջեւ առկա է որեւէ պատճառահետեւանքային կապ:

79. Դատարանը նշում է, որ այն ճանաչել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում այն առումով, որ Քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանը պատշաճ կերպով չի պատճառաբանել դիմումատուի՝ 2003 թվականի վճռի ճանաչման եւ կատարման պահանջը մերժելու վերաբերյալ իր որոշումը: Այնուհանդերձ, Դատարանի կողմից չի դիտարկվի այն հարցը, թե դիմումատուի վերաբերյալ իրականացված դատավարությունն ինչ արդյունք կունենար, եթե դատարանները պատճառաբանեին իրենց որոշումները: Դատարանը, հետեւաբար, չի տրամադրում նյութական վնասի հատուցում: Մյուս կողմից Դատարանը համարում է, որ դիմումատուն կրել է ոչ նյութական վնաս Կոնվենցիայի՝ սույն վճռով ճանաչված խախտման առումով: Առաջնորդվելով արդարության

սկզբունքով՝ Դատարանը դիմումատուին շնորհում է 5 000 եվրո հատուցում:

Բ. Ծախսերը եւ ծախքերը

80. Դիմումատուն այս մասով որեւէ պահանջ չի ներկայացրել:

Գ. Չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը

81. Դատարանը գտնում է, որ չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը պետք է հիմնված լինի Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի վրա, որին պետք է գումարվի երեք տոկոսային կետ:

ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱՐԱՆԸ՝

1. Միաձայն *հայտարարում է՝* 2003 թվականի վճռի չկատարման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության դեմ ներկայացված բողոքն ընդունելի, իսկ ձայների մեծամասնությամբ՝ գանգատի մնացած մասը՝ անընդունելի:

2. Ձայների՝ հինգը երկուսի հարաբերակցությամբ *վճռում է*, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:

3. Միաձայն *վճռում է*, որ 2003 թվականի վճռի չկատարման վերաբերյալ բողոքը Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի ներքո առանձին քննելու անհրաժեշտություն չկա:

4. Ձայների՝ հինգը երկուսի հարաբերակցությամբ *վճռում է*, որ՝

ա) Հայաստանի Հանրապետությունը վճիռը Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան վերջնական դառնալու օրվանից երեք ամսվա ընթացքում պետք է դիմումատուին որպես ոչ նյութական վնասի

հատուցում վճարի 5 000 եվրո (հինգ հազար եվրո)՝ գումարած գանձման ենթակա ցանկացած հարկ, որը պետք է փոխարկվի մոլդովական լեյով՝ վճարման օրվա դրությամբ գործող փոխարժեքով.

բ) վերը նշված եռամսյա ժամկետի ավարտից հետո՝ մինչև վճարման օրը, պետք է հաշվարկվի վերոնշյալ գումարների նկատմամբ պարզ տոկոսադրույք՝ չկատարման ժամանակահատվածում Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի չափով՝ գումարած երեք տոկոսային կետ.

5. Ձայների՝ հինգը երկուսի հարաբերակցությամբ *մերժում է* դիմումատուի՝ արդարացի փոխհատուցման պահանջի մնացած մասը:

Կատարված է անգլերենով եւ գրավոր ծանուցվել է 2012 թվականի հուլիսի 31-ին՝ Դատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ եւ 3-րդ կետերի համաձայն:

Սանտիագո Քեսադա

Ջուսելի Կասադեյա

Քարտուղար

Նախագահ

Կոնվենցիայի 45-րդ հոդվածի 2-րդ կետին եւ Դատարանի կանոնակարգի 74-րդ կանոնի 2-րդ կետին համապատասխան՝ սույն վճռին կից ներկայացվում են դատավորներ Գյուլումյանի, Զիմելեի, Լոպես Գեռայի եւ Յոցորիայի առանձին կարծիքները:

Ջ.Կ.Մ.

Ս.Ք.

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆԻ ԵՎ ԼՈՊԵՍ ԳԵՌԱՅԻ ՀԱՄԱՏԵՂ

ՉՀԱՄԸՆԿՆՈՂ ԿԱՐԾԻՔԸ

1. Մենք համաձայն չենք Պալատի՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտման վերաբերյալ եզրահանգումների հետ: [Վճիռների] կատարման պահանջով դիմումի շրջանակներում Քիշնեւ քաղաքի Չոկանայի շրջանային դատարանի 2003 թվականի վճիռը Հայաստանի Հանրապետության իշխանությունների կողմից ճանաչման եւ կատարման ենթակա լինելու ժամանակ տվյալ պահանջով դիմումը քննության է առնվել, եւ դրան պատասխան է տրվել երեք դատական ատյանների կողմից: Այդ վարույթների ընթացքում Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանը, վերացնելով Էրեբունի եւ Նուբարաշեն համայնքների [առաջին ատյանի] դատարանի նախորդ հրապարակումը, 2004 թվականի ապրիլի 23-ին որոշում է կայացրել դիմումատուի համապատասխան պահանջով դիմումը մերժելու մասին: Ներկայացված պատճառաբանման համաձայն համապատասխան պահանջով դիմումը վերաբերել է այն հարցերին, որոնց վրա տարածվում է *res judicata* սկզբունքը՝ համարելով (ինչպես նշված է սույն վճռի 68-րդ պարբերությունում), որ առկա է «միեւնոյն կողմերի միջեւ, միեւնոյն հիմքերով եւ միեւնոյն առարկայի շուրջ նախկինում կայացված վերջնական վճիռ, այն է՝ 1988 թվականի վճիռը»: Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանն անփոփոխ է թողել Քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի որոշումը:

2. Նման հանգամանքներում մենք չենք գտնում, որ Հայաստանի Հանրապետության իշխանությունները խախտել են Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը՝ Քիշնեւ քաղաքի համապատասխան դատարանի 2003 թվականի վճռի պատշաճ կատարման մասով: Ի պատասխան [վճիռների] կատարման պահանջով խնդրագրի՝ երեք անգամ Հայաստանի Հանրապետության համապատասխան դատարանները քննել են դիմումատուի բողոքները եւ լուծում տվել՝ հիմնվելով գործում առկա փաստերի իրենց գնահատականի վրա եւ ներպետական ու միջազգային կիրառելի իրավունքի իրենց մեկնաբանության վրա: Գործում առկա փաստերը քննելիս՝ ինչպես Վերաքննիչ դատարանն, այնպես էլ Վճռաբեկ

ԱՌԱՆՁԻՆ ԿԱՐԾԻՔՆԵՐ

դատարանը գտել են, որ Հայաստանի Հանրապետության համապատասխան դատարանի 1988 թվականի վճռի եւ Մոլդովայի Հանրապետության համապատասխան դատարանի 2003 թվականի վճռի քննության առարկան եղել է նույնը (այսինքն՝ լրացուցիչ բժշկական խնամքի եւ աշխատանքային պարտականությունների կատարման կապակցությամբ ստացված վնասվածքներից ծագող այլ ծախսերի փոխհատուցման պահանջը), որոնք հիմնված են եղել Մինսկի կոնվենցիայի 55-րդ հոդվածի «գ» կետի վրա, որը *res judicata* սկզբունքին առնչվող գործերում ազգային իշխանություններին ազատում է օտարերկրյա դատարանների որոշումների ճանաչման եւ կատարման պարտավորությունից: Հայաստանի Հանրապետության համապատասխան դատարանները նշել են իրենց վճիռների հիմնավորումներն ու այն նորմերը, որոնք իրենց կողմից կիրառվել են այնպիսի եղանակով, որը չի կարող համարվել կամայական կամ չհիմնավորված: Հետագայում դա վերահաստատվել է այն փաստով, որ 1988 թվականի վճռով փոխհատուցման համար պատասխանատու ընկերությունը սնանկ է ճանաչվել եւ վաճառվել է երրորդ կողմին, որը դատական կարգով ճանաչվել է որպես ընկերության պարտքերի համար պատասխանատվություն չկրող սուբյեկտ:

3. Դիմումատուն համաձայն չէ Հայաստանի Հանրապետության Վերաքննիչ դատարանի եւ Վճռաբեկ դատարանի եզրահանգումների հետ: Սակայն նրա անհամաձայնությունը՝ հիմնված փաստերի տարբեր մեկնաբանությունների վրա, բավարար հիմք չէ Հայաստանի Հանրապետության համապատասխան դատարանների կողմից քննված գործի փաստական եւ իրավական գնահատականի վերանայման համար, քանի որ նման գնահատականը (ինչպես սույն գործում) պատճառաբանված է եւ հիմնված է գործող օրենսդրության վրա: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության համապատասխան դատարանները պատշաճ իրավական ընթացակարգերի տեսանկյունից պահպանել են բոլոր դատավարական երաշխիքները (մի փաստ, որը դիմումատուն չի հերքում), Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով չի նախատեսվում, որ մեր Դատարանը քննում է ազգային դատարանների կողմից

ԱՌԱՆՁԻՆ ԿԱՐԾԻՔՆԵՐ

Եզրակացություններ կատարելիս ենթադրաբար թույլ տված փաստական կամ իրավական սխալները:

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ ԶԻՄԵԼԵԻ ԵՎ

ՑՈՑՈՐԻԱՅԻ ՀԱՄԱՏԵՂ ՉՀԱՄԸՆԿՆՈՂ ԿԱՐԾԻՔԸ

1. Մենք կողմ ենք քվեարկել 6-րդ հոդվածի խախտման մասով եւ դեմ՝ գանգատի մնացած մասի անընդունելիության ու դիմումատուի արդարացի փոխհատուցման պահանջի մերժման մասով: Մենք կարող ենք հետեւել մեծամասնության պատճառաբանությանը սույն գործով 6-րդ հոդվածի խախտում ճանաչելու հարցում, սակայն համարում ենք, որ այն լիարժեք չի անդրադառնում ամբողջությամբ վերցրած գործի շրջանակներում բարձրացված խնդրին:

2. Առաջին հերթին, 1988 թվականից առկա է եղել հոգուտ դիմումատուի կայացված՝ Երեւան քաղաքի համապատասխան համայնքային դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռը, որով ճանաչվել է դիմումատուի՝ մի շարք միանվագ վճարներ, ինչպես նաեւ մսի կոմբինատի կողմից կատարվող ամսական վճարումներ ստանալու իրավունքը, որը բխել է այդ կոմբինատում դիմումատուի աշխատանքային պարտականությունների կատարման կապակցությամբ ստացված վնասվածքից, ինչն էլ հիմք է հանդիսացել դրան հաջորդող նրա հաշմանդամության համար: Կոմբինատը դիմումատուին վճարումներ է կատարել մինչեւ 1992 թվականը: 1997 թվականին կոմբինատը սնանկ է ճանաչվել, եւ պարտապան ընկերությունն ազատվել է որեւէ պարտք վճարելուց՝ «[Ձեռնարկությունների եւ անհատ ձեռներեցների] սնանկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի համաձայն: Հարկ ենք համարում նշել, որ Կառավարության 1992 թվականի որոշմամբ նախատեսվել է, որ ընկերության լուծարման դեպքում դրա իրավահաջորդը պետք է վճարի պարտքերը, իսկ իրավահաջորդի բացակայության դեպքում պետության սոցիալական ապահովության մարմինները պետք է պարտավորվեն վճարել դրանք: Այս որոշումն ուժի մեջ է եղել մինչեւ 2004 թվականի օգոստոս ամիսը: Ավելին, Հայաստանը եւ Մոլդովան Մոսկվայի համաձայնագրի կողմեր են եղել, որի 7-րդ հոդվածը սահմանում է. «Աշխատողին պատճառված վնասի համար պատասխանատու ձեռնարկության լուծարման եւ դրա իրավահաջորդի բացակայության դեպքում Պայմանավորվող կողմը, որի տարածքում լուծարվել է

ձեռնարկությունը, այդ աշխատողների համար երաշխավորում է վնասի փոխհատուցում՝ ներպետական օրենսդրությանը համապատասխան:»:

3. 2001 թվականին դիմումատուն Մոլդովայի Հանրապետության արդարադատության նախարարության միջոցով եւ Մոսկվայի համաձայնագրի վկայակոչմամբ, Հայաստանի Հանրապետության իշխանություններից պահանջել է կատարել 1988 թվականի վճիռը: Փոխադարձ գրագրության արդյունքում 2002 թվականին Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը տեղեկացրել է Մոլդովայի Հանրապետության արդարադատության նախարարությանը մսի կոմբինատի սնանկ ճանաչվելու հանգամանքի եւ իրավահաջորդի բացակայության մասին: Պետք է նշել, որ այդ պատասխանն ուղարկվել է Մոլդովա այն ժամանակ, երբ դեռ ուժի մեջ է եղել Կառավարության 1992 թվականի որոշումը: Դիմումատուի եւ Հայաստանի Հանրապետության տարբեր իրավասու մարմինների միջեւ տեղի ունեցած մի քանի տարվա գրագրությունից հետո՝ 2006 թվականին, Հայաստանի Հանրապետության աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունը հայտարարել է, որ դիմումատուն պետական բյուջեից միջոցներ ստանալու համար կարող է դիմել սոցիալական ապահովության մարմիններին՝ Կառավարության 1992 թվականի հրամանով սահմանված կարգով: Քանի որ դիմումատուն չի օգտվել այդ հնարավորությունից, ապա նա պետք է այժմ իր հարցով բողոք ներկայացնի ներպետական դատարաններ:

4. Պալատը գտնում է՝ քանի որ սնանկության վարույթը դադարեցվել է 1997 թվականին, ապա 1998 թվականի վճիռը չկատարելու վերաբերյալ դիմումատուի բողոքը *ratione temporis* սկզբունքի մասով դուրս է Դատարանի իրավագործությունից: Մենք համաձայն չենք այս գնահատականի հետ: Վճռի չկատարումը շարունակական բնույթ է կրում մինչեւ այն պահը, երբ վճիռը բեկանվում կամ այլ կարգով փոփոխվում է համապատասխան դատարանների կողմից (տե՛ս *Սաբին Պոպեսկուն ընդդեմ Ռումինիայի* [*Sabin Popescu y. Romania*], թիվ 48102/99, § 54, 2004 թվականի մարտի 2): Պարզվում է, որ ո՛չ այդ մոտեցումն է կիրառելի այստեղ, եւ ո՛չ էլ ընկերության սնանկության վերաբերյալ որոշումը

ԱՌԱՆՁԻՆ ԿԱՐԾԻՔՆԵՐ

կարող է նման բեկանման փաստ համարվել, քանի որ Հայաստանը, թե՛ ներպետական օրենսդրության եւ թե՛ Մոսկվայի համաձայնագրի դրույթների համաձայն, պարտավոր է եղել ապահովել, որ իր տարածքում աշխատող անձանց պատճառված վնասների համար փոխհատուցում տրամադրվի: Պալատը սույն գործում կասկածելի տարանջատում է դրել լուծարման ու սնանկացման միջեւ: Նույնիսկ ենթադրելով, որ նման տարանջատում կարող է արվել, այնուամենայնիվ, Մոսկվայի համաձայնագրի առարկան եւ նպատակը Հայաստանի Հանրապետության իշխանությունների կողմից պետք է պատշաճորեն գնահատվեն: 2001 թվականին Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը պետք է արդեն տեղյակ լիներ, թե դիմումատուի պահանջով դիմումը որ մարմինն պետք է ուղղվեր, կամ եթե նրանք համարել են, որ դիմումատուն պետք է հայց ներկայացնե՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան դատարաններ, ապա նրանք պետք է համապատասխանաբար տեղեկացնեին դիմումատուին դրա մասին: Հայաստանի Հանրապետության իշխանությունները միայն 2006 թվականին են համապատասխան հայտարարությունն արել, որն արդեն շատ ուշ է եղել դիմումատուի համար՝ սոցիալական ապահովության մարմիններից փոխհատուցում ստանալու համար: Այդ պատասխանն ինքնին չունի էական նշանակություն, քանի որ դիմումատուն համապատասխան իշխանությունների հետ կապի մեջ է եղել՝ սկսած 2001 թվականից:

5. Պալատն իրավացի է 57-րդ պարբերության մեջ կատարած դիտարկմամբ այն մասին, որ մենք չենք կարող որոշել կոմբինատի լուծարման կամ սնանկության վերաբերյալ վարույթների պատշաճ կարգը: Միեւնույն ժամանակ Դատարանը միշտ գնահատել է վճիռների չկատարման հետ կապված վարույթներում պետության գործողությունները՝ ներառյալ վճիռների կատարումն ապահովող պատշաճ եւ հստակ օրենսդրություն ունենալու պարտավորությունը: Մենք համարում ենք, որ 1988 թվականի վճռի կատարումը շատ խնդրահարույց է եղել, եւ դժվարությունները վերագրելի են Հայաստանին: Մեկ այլ մեծ խնդիր է ի հայտ գալիս՝ կապված Մոսկվայի համաձայնագրի ներքո Հայաստանի

ԱՌԱՆՁԻՆ ԿԱՐԾԻՔՆԵՐ

Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների կատարման հետ: Թվում է, թե դիմումատուի խնդիրները դեռևս առկա են, եւ 2003 թվականի վճռի ընդունմանը հանգեցրած ընթացակարգերը հարցին լուծում չեն տվել, եթե դրանք իրականում վերաբերում են 1988 թվականի վճռին, որի կապակցությամբ Պալատը 6-րդ հոդվածով խախտում է ճանաչել. այս հարցը մնում է անհասկանալի: Վերը նշված պատճառաբանությամբ մենք համարում ենք, որ տեղի է ունեցել 6-րդ հոդվածի խախտում նաեւ 1988 թվականի վճռի չկատարման մասով: